ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՔՐԻՍՏԻՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Վարդանյան,

ի պատասխան Ձեր 15.07.2026թ. գրության՝ տեղեկացվում է, որ Դավթաշեն վարչական շրջանի Եղվարդի խճուղում գտնվող չորացած բարդին, որն ուժգին քամու հետևանքով կոտրվել և ընկել է մոպեդի ու ավտոմեքենայի վրա, ըստ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրած տվյալների՝ գտնվել է մասնավոր սեփականություն հանդիսացող տարածքում (կադաստրային ծածկագիր՝ 01-004-0118-0048): Ուստի, նշված տարածքի սպասարկումը դուրս է Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի գործառույթների շրջանակից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ